



FO 75-30-01-01

ՁԳ 1 / 5

Visa Electron «Կենսաթոշակային» սակագնային փաթեթ

Խմբագրություն: 01

Ուժի մեջ է՝ 22.11.2022թ.-ից

Վարչության 2022թ. նոյեմբերի 17-ի թիվ 01/090-552 Լ որոշում

Հ/Հ	Visa Electron Կենսաթոշակային	AMD
1. Հիմնական միջնորդավճարներ		
1.1	Քարտի տրամադրում (թողարկում)	անվճար
1.2	Քարտի սպասարկման վարձ	անվճար
1.3	Քարտային հաշվի նվազագույն մնացորդ	-
1.4	Կից քարտի սպասարկման վարձ	Չի տրամադրվում
1.5	Կանխիկացման գործարքներ իրականացնելու դիմաց վճարներ	
	– Բանկի և Ակբա բանկի բանկոմատներում քարտերով	0%
	– Բանկի և Ակբա բանկի բանկոմատներում թվայնացված քարտով	1,5% min 1500 ՀՀ դրամ
	– Բանկի կանխիկացման կետերում	0%
	– «Արքա» համակարգի անդամ այլ բանկերի բանկոմատներում և կանխիկացման կետերում քարտերով	0.5%
	– «Արքա» համակարգի անդամ այլ բանկերի և բոլոր այլ բանկերի բանկոմատներում թվայնացված քարտով	1,5% min 1500 ՀՀ դրամ
	– Այլ բանկերի բանկոմատներում քարտերով	0.5%
	– Առանց քարտի առկայության կանխիկ գումարի ստացում Բանկի դրամարկղերից (կիրառելի չէ քարտի և քարտային հաշվի փակման դեպքում)	2%
1.6	Քարտային հաշվին դրամական միջոցների մուտքագրման գործարքներ իրականացնելու դիմաց վճարներ	
	– Մինչև 100000 ՀՀ դրամ (կամ համարժեք արտարժույթ) կանխիկ դրամական միջոցների մուտքագրում բանկի դրամարկղից բանկային կիոսկներով հազեցված մասնաճյուղերում	1% min 100 ՀՀ դրամ
	– Մինչև 100000 ՀՀ դրամ (կամ համարժեք արտարժույթ) կանխիկ դրամական միջոցների մուտքագրում բանկի դրամարկղից բանկային կիոսկներով չհազեցված մասնաճյուղերում	1% min 100 ՀՀ դրամ
	– 100000 ՀՀ դրամից (կամ համարժեք արտարժույթից) ավել կանխիկ դրամական միջոցների մուտքագրում	1% min 100 ՀՀ դրամ
	– Քարտային հաշվի համալրում անկանխիկ փոխանցմամբ	Համաձայն ֆիզիկական անձ հաճախորդների բանկային փոխանցումների և վճարումների սակագների ու պայմանների
1.7	Քարտային հաշվին առկա մնացորդի դիմաց	



FO 75-30-01-01

ՁԳ 2 / 5

Visa Electron «Կենսաթոշակային» սակագնային փաթեթ

Խմբագրություն: 01

Ուժի մեջ է՝ 22.11.2022թ.-ից

	օրական հաշվարկվող տարեկան պարզ (անվանական) տոկոսադրույք*	
	– Օրվա ավարտի դրությամբ մնացորդը մեծ կամ հավասար է 5,000,000 ՀՀ դրամից	2%
	– Օրվա ավարտի դրությամբ մնացորդը փոքր է 5,000,000 ՀՀ դրամից	0%
1.8	Ապրանքների և ծառայությունների համար անկանխիկ վճարման միջնորդավճար	0%
2. Կորուստ, վերաթողարկում և փակում		
2.1	Քարտի գործողության կասեցում բանկի հավաստագրման համակարգում	0
2.2	Քարտի գործողության կասեցում բանկի հավաստագրման համակարգում և տեղադրում Stop-list-ում,	15000 ՀՀ դրամ 2 շաբաթվա համար
2.3	Քարտի վերաթողարկում՝ համաձայն հաճախորդի դիմումի	անվճար
2.4	Արտասահմանում քարտի կորստի դեպքում կանխիկի շտապ տրամադրում	Ծառայությունը հասանելի չէ
2.5	Արտասահմանում քարտի ժամանակավոր շտապ վերաթողարկում	Ծառայությունը հասանելի չէ
2.6	PIN կոդի սխալ մուտքագրումների արդյունքում կասեցված քարտի գործողության ապակասեցում բանկի հավաստագրման համակարգում	անվճար
2.7	Վճարային քարտի և քարտային հաշվի փակում	անվճար
3. Տույժեր և տուգանքներ		
3.1	Քարտային հաշվի գերաճախսի համար տույժ	48% տարեկան
3.2	Ոչ ակտիվ քարտերի սպասարկման վճար***	1.քարտային հաշվի մնացորդը 2'500 ՀՀ դրամից կամ դրան համարժեք գումարից պակաս լինելու դեպքում՝ հաշվի մնացորդի չափով 2.քարտային հաշվի մնացորդը 2'500 ՀՀ դրամից կամ դրան համարժեք գումարից ավել լինելու դեպքում՝ 2'500 ՀՀ դրամ, իսկ 13-րդ ամսից սկսած հաջորդող չաշխատող ժամանակահատվածի համար՝ ամսական 1'000 ՀՀ դրամ: 3.Հինգ տարի շարունակ ոչ ակտիվ կարգավիճակ ունեցող հաճախորդներից գանձվում է միանվագ 15000 դրամ, ընդ որում քարտային հաշվի մնացորդը վերջինից կամ դրան համարժեք գումարից պակաս լինելու դեպքում՝ հաշվի մնացորդի չափով
4. Փոխանցումներ		
4.1	Քարտից քարտ փոխանցում Բանկի քարտին	0.30%
4.2	Քարտից քարտ փոխանցում «Արքա» համակարգի	0.50%



FO 75-30-01-01

ՁԳ 3 / 5

Visa Electron «Կենսաթոշակային» սակագնային փաթեթ

Խմբագրություն: 01

Ուժի մեջ է՝ 22.11.2022թ.-ից

	անդամ այլ բանկերի քարտերին	
4.3	Քարտային հաշվից ներբանկային փոխանցում	0.30% max 3000 ՀՀ դրամ
4.4	Քարտային հաշվից միջբանկային փոխանցում ՀՀ բանկեր	0.50%
4.5	Քարտային հաշվից միջբանկային փոխանցում ոչ ՀՀ բանկեր	Բանկում գործող SWIFT փոխանցումների սակագների համաձայն
5. Այլ միջնորդավճարներ		
5.1	Լուսանկարի արտապատկերում	Ծառայությունը հասանելի չէ
5.2	Priority Pass քարտի տրամադրում և վերաթողարկում	Ծառայությունը հասանելի չէ
5.3	Priority Pass ցանցին պատկանող սրահների մուտք	Ծառայությունը հասանելի չէ
5.4	Հավաստագրումների վերաբերյալ SMS հաղորդագրության ուղարկում	15 ՀՀ դրամ
5.5	Քարտային հաշվի վերաբերյալ SMS հաղորդագրության ուղարկում Վարկային պարտավորությունների մարման վերաբերյալ	անվճար
5.6	Քաղվածքի տրամադրում ամեն ամիս տվյալ ամսվա համար**	անվճար
5.7	Քաղվածքի տրամադրում օրական կտրվածքով**	անվճար
5.8	Քաղվածքի տրամադրում ամփոփ**	1000 ՀՀ դրամ
5.9	Քաղվածքի տրամադրում 1 ամսից մինչև 1 տարի կտրվածքով**	2000 ՀՀ դրամ
5.10	Քաղվածքի տրամադրում 1 տարուց ավելի ժամանակահատվածի համար**	3000 ՀՀ դրամ
5.11	Տեղեկանքի տրամադրում ժամկետանց վարկի գծով պարտավորության վերաբերյալ**	անվճար
5.12	Տեղեկանքի տրամադրում հաշվի մնացորդների վերաբերյալ**	1000 ՀՀ դրամ
5.13	Տեղեկանքի տրամադրում պարտավորությունների վերաբերյալ**	1000 ՀՀ դրամ
5.14	Տեղեկանքի տրամադրում պարտավորություն չունենալու վերաբերյալ**	1000 ՀՀ դրամ
5.15	Տեղեկանքի տրամադրում հաշվի առկայության վերաբերյալ**	1000 ՀՀ դրամ
5.16	Տեղեկանքի տրամադրում հաշիվ չունենալու վերաբերյալ**	1000 ՀՀ դրամ
6. Հավաստագրման սահմանաչափեր		
6.1	Օրական կանխիկացման սահմանաչափ	500000 ՀՀ դրամ
6.2	Օրական կանխիկացման գործարքների քանակ	3
6.3	Օրական անկանխիկ գործարքների առավելագույն սահմանաչափ	500000 ՀՀ դրամ
6.4	Օրական անկանխիկ գործարքների քանակ	10
7. Տրամադրման պայմաններ		
7.1	Հիմնական վճարային քարտը տրամադրվում է ՀՀ, ԼՂՀ կամ այլ երկրի քաղաքացիություն	



FO 75-30-01-01

ՁԿ 4 / 5

Visa Electron «Կենսաթոշակային» սակագնային փաթեթ

Խմբագրություն: 01

Ուժի մեջ է՝ 22.11.2022թ.-ից

	ունեցող և կենսաթոշակառու հանդիսացող, 14 տարեկանը լրացած ֆիզիկական անձի, որը ներկայացնում է Դեբետային (հաշվարկային) քարտի տրամադրման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկով սահմանված պատշաճ և վավեր փաստաթղթեր (անձնագիր կամ նույնականացման քարտ կամ ծննդյան վկայական՝ 14-ից մինչև 16 տարեկան անչափահասների դեպքում):
7.2	Վճարային քարտը տրամադրվում է ՀՀ-ում կամ ԼՂՀ-ում փաստացի բնակության հասցե և բջջային հեռախոսամար ունեցող ֆիզիկական անձանց:
7.3	Վճարային քարտը տրամադրվում է 2 տարի ժամկետով, վճարային քարտի վերաթողարկումը նոր ժամկետով իրականացվում է Վճարային քարտերի կանոններով սահմանված դեպքերում:
7.4	Վճարային քարտի հաշիվը բացվում է ՀՀ դրամով:
7.5	Միևնույն արժույթով կարող է թողարկվել միայն մեկ նույնատեսակ վճարային քարտ:
7.6	Վճարային քարտին կցված բանկային հաշիվը նախատեսված է միայն ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Սոցիալական ապահովության պետական ծառայության կողմից փոխանցվող կենսաթոշակի(նպաստի) գումարների ստացման համար՝ այլ տեղերից հաշվին կատարվող մուտքերը արգելվում են:
7.7	Կենսաթոշակի ստացման անընդհատությունը ապահովելու համար կենսաթոշակառուն առաջին կենսաթոշակի փոխանցումից հետո մինչև օրացուցային մեկ տարի լրանալը պետք է առնվազն մեկ անգամ անձամբ ներկայանա Բանկ և ստորագրի ներկայանալու վերաբերյալ փաստաթուղթ: Յուրաքանչյուր ներկայանալու փաստը արձանագրելուց հետո կենսաթոշակի փոխանցումները կիրականացվեն ևս մեկ տարվա ընթացքում:
7.8	Վճարային քարտը թողարկվում է Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկով սահմանված փաստաթղթերը Բանկ ներկայացնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում և ակտիվացվում է Վճարային քարտերի կանոններով սահմանված կարգով:

*«Տարեկան պարզ (անվանական) տոկոսադրույքը» տարեկան կտրվածքով սակագներով սահմանված տոկոսադրույք է, որի հիման վրա Բանկը հաշվարկում է Հաճախորդին վճարման ենթակա տոկոսագումարները:

Օրինակ՝ $1000 \text{ ՀՀ դրամ} \cdot 5\% = 50 \text{ ՀՀ դրամ}$ 365 օրվա համար

Հաշվի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY) այն տոկոսն է, որն անձը կստանա 1000 ՀՀ դրամ ավանդի դիմաց 365-օրյա ժամանակահատվածի ընթացքում տարեկան պարզ տոկոսադրույքի կիրառման և տոկոսների կապիտալացման ու վճարման կանոնավոր հաճախականության հետևանքով:

Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերություն է հանդիսանում տարեկան տոկոսային եկամտաբերության տոկոսադրույքով վճարվող տոկոսների հաշվարկման արդյունքում ստացված գումարը:

Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկման կարգը սահմանված է ՀՀ ԿԲ «Բանկային ավանդների տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկումը» Կանոնակարգ 8/02-ով:

Բանկը վճարման ենթակա տոկոսագումարը վճարում է հաճախորդի հաշվին յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, ընդ որում «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն Հաճախորդին հաշվեգրված տոկոսները վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես ավանդատուի հարկային գործակալ, գանձում է եկամտային հարկ տոկոսագումարի (եկամտի) օրենքով սահմանված չափով և փոխանցում պետական բյուջե:

** Բանկի հաճախորդներին տրամադրման ենթակա չեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանության ժամկետը լրացած փաստաթղթերը և/կամ տեղեկատվությունը:

*** Սույն կետի իմաստով ոչ ակտիվ է համարվում այն քարտը, որը ժամկետանց է և որի հաշվետերը իր բոլոր հաշիվներով միաժամանակ գործառնություններ չի կատարել վերջին մեկ



FO 75-30-01-01	Ֆճ 5 / 5
Visa Electron «Կենսաթոշակային» սակագնային փաթեթ	Խմբագրություն: 01
	Ուժի մեջ է՝ 22.11.2022թ.-ից

տարվա (12 ամիսների) ընթացքում, ընդ որում, սույն սահմանման իմաստով հաշվով գործառնությունների ներքո չեն ընդգրկվում Բանկի կողմից հաշվի սպասարկման վճարի կամ Բանկի առջև Հաճախորդի այլ պարտավորությունների դիմաց համապատասխան դրամական միջոցների գանձման (հաշվանցի), ինչպես նաև դատարանի վճռի հիման վրա հաշվի միջոցների բռնագանձման դեպքերը

Քացի սույն սակագներում սահմանվածից, կանխիկացման գործարքների իրականացման համար սպասարկող բանկի կողմից կարող են կիրառվել սպասարկման լրացուցիչ միջնորդավճարներ: